



ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ԱՄՆԻՈՑԵՆՏԵԶ

1. Ամնիոցենտեզի նպատակն է հայտնաբերել պղտի մոտ որոշակի գենետիկական դեֆեկտներ, հիմնականում քրոմոսոմային անոմալիաների մեծ մասը հնարավոր է հայտնաբերել ամնիոցենտեզի միջոցով: Տվյալ դեպքում ամնիոցենտեզ ցուցված է կատարել հետևյալ պատճառով _____
2. Ամնիոցենտեզից առաջ կատարվում է ուլտրաձայնային հետազոտություն (ՈՒՁՀ) պարզելու համար պտղի և ընկերքի տեղակայումը: ՈՒՁՀ-ի միջոցով հնարավոր է նաև հայտնաբերել բազմապտուղ հղիություն, հղիության ժամկետի շեղումներ և պտղի որոշ, բայց ոչ բոլոր ֆիզիկական արատները:
3. Ամնիոցենտեզը կատարվում է հետևյալ եղանակով՝ մոր որովայն առաջային պատից ասեղի միջոցով վերցվում է որոշակի քանակությամբ (20 մլ) պտղաջուր: Հնարավոր է մոր մոտ որոշակի դիսկոմֆորտի զգացողություն ասեղի ինյեկցիայի ժամանակ:
4. Ամնիոցենտեզի հնարավոր բարդությունները հանդիպում են <1% դեպքերում: Ամենալուրջ բարդությունը վիժումն է: Մյուս հազվադեպ հանդիպող, սակայն լուրջ բարդություններն են՝ արյունահոսությունը, ինֆեկցիան և պտղի տրավման: Թեթև բարդություններն են՝ ցնցումները, հեշտոցային արյունային արտադրությունը, ամնիոտիկ հեղուկի աննշան արտահոսքը և ցավոտություն ինյեկցիայի հատվածում: Վաղ ամնիոցենտեզի ժամանակ (12-15 շաբաթական հղիություն) բարդությունների՝ վիժման, ամնիոտիկ հեղուկի արտահոսքի և անբավարան քանակությամբ բջիջների վերցման ռիսկը ավելի մեծ է, քան ստանդարտ ամնիոցենտեզի ժամանակ (15 շաբաթական հղիություն):
5. 100 պրոցենտից 1-ի դեպքում, միջամտությունը հարկավոր կլինի կրկնել անբավարար քանակով հեղուկ ստանալու հետևանքով: Երբեմն նույնիսկ հեղուկի բավարար քանակի դեպքում ախտորոշում դնելը անհնարին է և հարկավոր է լինում կրկնել միջամտությունը կամ հնարավոր է հարկավոր լինի հետագա թեստավորումներ:
6. Թեստավորման ստանդարտի օրինակ է ամնիոտիկ հեղուկի քրոմոսոմալ անալիզը, որը հայտնաբերում է քրոմոսոմային անոմալիաների 99%ը:
7. Թեստի նորմալ պատասխանը չի հավաստագրում առողջ երեխայի ծնունդը: Ինչպես և մյուս լաբորատոր հետազոտությունները, սա նույնպես ունի սխալի չնչին հավանականություն, դա կարող է տեղի ունենալ երբ նյութը <<ախտոտվում>> է մայրական բջիջներով: Բացի այդ բոլոր հղիությունների 3-5%ը կարող են ունենալ բնածին արատ, որոնք չեն կարող ախտորոշվել ամնիոտիկ հեղուկի թեստավորմամբ կամ ՈՒՁՀ-ով:

Իմ ստորագրությունը վկայում է նրա մասին, որ ես կարդացել եմ կամ ինձ կարդացել են վերը նշված ինֆորմացիան և ես այն հասկանում եմ: Ես նաև կարդացել եմ կամ ինձ բացատրել են սպեցիֆիկ հիվանդությունների և վիճակների մասին, որոնք թեստավորվելու են և սպեցիֆիկ թեստերի մասին, որոնք կիրառվելու են ներառելով այս թեստի նկարագրիչը, պրինցիպները և սահմանափակումները: Ես ունեցել եմ հնարավորություն քննարկելու իմ բժիշկի հետ թեստավորման նպատակը և հնարավոր ռիսկերը: Ինձ տրված է ինֆորմացիայի այն ծավալը, որը ինձ բավարարում է և իմ բոլոր հարցերին տրվել են պատասխաններ:

ԱՅՈՒ: Ես խնդրում եմ որ բժիշկ _____ կատարի ամնիոցենտեզ: Ես հասկանում եմ և ընդունում եմ այս որոշման հետևանքները:

ՈՉ: Ես հրաժարվում եմ ամնիոցենտեզից: Ես հասկանում եմ և ընդունում եմ այս որոշման հետևանքները:

Պացիենտի ստորագրություն